ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

DOI: 10.59560/18291155-2025.1-133

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական վարչության անհատական դիմումների վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ, Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ամփոփագիր

Անմեղության կանխավարկածի սկզբունքը համընդհանուր իրավական սկզբունք է, որն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածով[1]: Վերոգրյալ սկզբունքի կապակցությամբ դեռևս 18-րդ դարում ֆրանսիացի հայտնի փիլիսոփա Շ. Մոնտեսքյոն գրել է. «եթե քաղաքացիների անմեղությունը ցանկապատված չէ, ապա ազատությունը նույնպես ցանկապատված չէ»[2]: Գիտական գրականության մեջ հեղինակների մեծամասնությունն անմեղության կանխավարկածի սկզբունքը դիտարկում է բացառապես որպես քրեադատավարական սկզբունք: Չկիսելով վերոգրյալ կարծիքը՝ սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում քննարկել անմեղության կանխավարկածի սկզբունքի ներդրման և հստակ իրավական ամրագրման անհրաժեշտությունը վարչահիրավական հարաբերություններում: Հետևաբար՝ սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք վեր հանել վարչահիրավական հարաբերություններում անմեղության կանխավարկածի սկզբունքի ներդրման և օրենսդրական հստակ ամրագրման անհրաժեշտությունը հիմնավորող գործոնները և առավել հստակ ընդգծել տվյալ

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

[2] Տե՛ս **Монтескье Ш.Л.** О духе законов / Пер. с фр. А. Горнфельда. - М.: Издательство АСТ, 2022, էջ 57:

սկզբունքի կիրառման ոլորտը հենց խնդրո առարկա իրավահարաբերություններում՝ հաշվի առնելով վարչաիրավական հարաբերությունների բազմազանությունը:

Հիմնաբառեր. անմեղության կանխավարկած, վարչական պատասխանատվություն, վարչական իրավախախտում, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործ, անմեղության կանխավարկածի կիրառությունը վարչաիրավական հարաբերություններում:

Գիտական համայնքում առկա են տարբեր տեսակետներ կապված վարչական իրավունքում անմեղության կանխավարկածի սկզբունքի գոյության անհրաժեշտության հարցի հետ: Ավելին, վարչական իրավունքով զբաղվող և վարչական մասնագիտացմամբ իրավաբանների և տեսաբանների հիմնական մասը գտնում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի գոյությունն անհրաժեշտ է վարչական իրավունքում, քանի որ այն անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է:

Մասնավորապես, Ա. Պ. Շերգինը, որպես մոդելային համակարգ, առաջարկել է վարչական դատավարության մի շարք սկզբունքներ, որոնցում ներառված է նաև անմեղության կանխավարկածի սկզբունքը[1]:

Ն. Դ. Բախրախը գտնում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի գործողության ոլորտը չպետք է սահմանափակվի և այդ սկզբունքի բովանդակության մեջ պետք է ներառվի քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկված յուրաքանչյուր անձ[2]:

Բ. Վ. Ռոսինսկին ևս ընդգծում է անմեղության կանխավարկածի սկզբունքի անխախտելիությունը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթներում[3]:

Մեկ այլ հեղինակ՝ Ն. Ն. Ցուկանովը համոզված է անմեղության կանխավարկածի անհրաժեշտության մեջ՝ ապացուցելով անմեղության կանխավարկածը որպես վարչական գործընթացի սկզբունք դիտարկելու հիմնավորվածությունը[4]:

---

[1] Տե՛ս **Шергин А.П.** Процессуальная составляющая правового регулирования административной ответственности // Административное право и процесс. 2010. № 3. էջ 3–7:

[2] Տե՛ս **Бахрах Д.Н., Ренов Э.Н.** Производство по делам об административных правонарушениях: Пособие для слушателей нар. ун-тов. - М.: Знание, 1989. էջ 95:

[3] Տե՛ս **Россинский Б.В., Старилов Ю.Н.** Административное право: Учебник. 4-е изд., пересмотр. и доп. - М.: Норма, 2009. էջ 897:

[4] Տե՛ս **Цуканов Н.Н.** Правовые презумпции в административной деятельности милиции: дис. ... канд. юрид. наук. - Омск, 2001:

Հեղինակներ Յու. Ի. Միգաչովը, Լ. Լ. Պոպովը և Ս. Վ. Տիխոմիրովը ևս նշել են, որ անմեղության կանխավարկածը վարչական պատասխանատվության սկզբունք է[1]:

Ն. Գ. Դեմենկովան, Մ. Ս. Իգնատովան, Ի. Յու. Ստարիկովը ևս անմեղության կանխավարկածը դասել են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի սկզբունքների շարքին[2]:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է արձանագրել, որ վարչական իրավունքի տեսաբանները համոզված են, որ վարչական իրավունքում անմեղության կանխավարկածի սկզբունքի գոյությունը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարույթների ընթացքում անձին վարչական պատասխանատվության ենթարկելիս խիստ պահանջված և անհրաժեշտ է:

Քննարկվող համատեքստում հարկ է նշել, որ ոստիկանության և դրա ծառայողների նկատմամբ վստահության բացակայության կամ պակասի ներկայում հասունացած խնդիրն իր գիտական աշխատություններում, ի թիվս այլոց, բարձրացրել է Օ. Ի. Ցոկոլովան: Վերջինս իրավացիորեն նշել է, որ «ոստիկանության նկատմամբ բնակչության վստահությունը կարելի է միայն վաստակել, և ոչ մի իրավական նորմ դա չի երաշխավորում»[3]:

Ամբողջությամբ կիսելով վերոգրյալ կարծիքը՝ գտնում ենք, որ ոստիկանության և դրա ծառայողների նկատմամբ վստահության աստիճանի (մակարդակի) վրա մեծ ազդեցություն է թողնում հասարակության կարծիքը, որը ձևավորվում է նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթների որակական, այն է՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում: Գտնում ենք, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը, առաջին հերթին, կարող է երաշխավորվել անմեղության կանխավարկածի սկզբունքի իրացման միջոցով, քանի որ տվյալ սկզբունքն ապահովում է արդար, հիմնավորված և օրինական որոշումների կայացումը: Ողջ վերոշարադրյալը հաստատում է վարչական իրավունքում՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթների ընթացքում, անմեղության կանխավարկածի սկզբունքի գոյության և, հատկապես, օրենսդրությամբ դրա ուղղակիորեն ամրագրման անհրաժեշտությունը:

---

[1] Տե՛ս **Мигачев Ю.И., Попов Л.Л., Тихомиров С.В.** Административное право Российской Федерации: Учебник для вузов / Под ред. Л.Л. Попова. 6-е изд., перераб. и доп. - М.: Издательство Юрайт, 2024. էջ 182:

[2] Տե՛ս **Деменкова Н.Г., Игнатова М.С., Стариков И.Ю.** Административное право в схемах и таблицах: Учеб. пособие. - Москва: Проспект, 2019. էջ 112:

[3] Տե՛ս **Цоколова О.И.** К вопросу о презумпции доверия полиции // Научный портал МВД России. 2019. № 1 (45). էջ 126:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով վարչական իրավունքի առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է ընդգծել, որ վերջինս կարգավորում է մի կողմից ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց, իսկ մյուս կողմից՝ պետության՝ ի դեմս պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց միջև հարաբերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական իրավահարաբերություններում մի կողմը (սուբյեկտներից մեկը) միշտ ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, իսկ մյուս կողմը՝ պետական իշխանությամբ և լիազորություններով օժտված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը և դրա պաշտոնատար անձը (հետևաբար՝ գործնականում տվյալ իրավահարաբերություններում առկա չէ կողմերի միջև իրավահավասարություն), գտնում ենք, որ նման անհավասար պայմաններում վարչական իրավահարաբերության մի կողմի՝ պետության իշխանությանը որոշակիորեն զսպող և հակակշռող գործոն կարող է հանդիսանալ անմեղության կանխավարկածի սկզբունքի լիարժեք ներդրումը վարչական իրավունքում: Այնուամենայնիվ, վարչական օրենսդրության մեջ անմեղության կանխավարկածի սկզբունքն անհրաժեշտ է լիարժեքորեն ներդնել և երաշխավորել ոչ թե առհասարակ բոլոր տեսակի վարչական իրավահարաբերություններում, այլ բացառապես վարչական իրավախախտումների հիման վրա վարույթների ընթացքում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի վարչական պատասխանատվության հարցը լուծելիս: Ուստի՝ մեր առաջարկը կառուցված է այն տրամաբանությամբ, որ **անմեղության կանխավարկածը վարչական իրավունքում ենթակա է կիրառման միայն վարչական իրավախախտումների հիման վրա վարույթներով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հարցը լուծելու իրավահարաբերություններում:**

Սույն համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ մի քանի կարևոր հանգամանքների, որոնք ևս վկայում են վարչական իրավունքում անմեղության կանխավարկածի գոյության անհրաժեշտության մասին:

Առաջին հերթին, ինչպես արդեն վերը նշել ենք, վարչական իրավահարաբերությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ տվյալ իրավահարաբերության սուբյեկտները, ի տարբերություն քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների, վարչական դատավարության՝ կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացվելու սկզբունքի առկայությամբ հանդերձ, միևնույն է, գործնականում իրավահավասար չեն՝ պայմանավորված սուբյեկտներից մեկի պետաիշխանական լիազորություններով օժտված լինելու հանգամանքով: Վերը նշվածի համատեքստում հարկ է նշել, որ վարչական իրավահարաբերությունների սուբյեկտներից մեկը միշտ պետությունն է՝ ի դեմս պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց:

Հետևաբար, գտնում ենք, որ վարչական իրավունքում անմեղության կանխավարկածի սկզբունքի լիարժեքորեն ներդրումը որոշակի առումով կարող է հավասարեցնել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի կողմերի ուժերը և ապահովել վերջիններիս շահերի հավասարակշռումը: Ավելին՝ վարչաիրավական հարաբերությունների՝ պետական լիազորություններով օժտված կողմը, իր աշխատանքային պարտականությունների բնույթով և իրացմամբ պայմանավորված, հիմնականում առավել իրազեկ է գործող իրավակարգավորումների վերաբերյալ, հետևաբար՝ առավել «զինված» դատավարության ընթացքում և օժտված առավել մեծ լծակներով:

Հավելելով՝ հարկ է նշել, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթում պետությունն օժտված է պետական հարկադրանքի միջոցներ կիրառելու իրավասությամբ և, իր կարգավիճակով պայմանավորված, ունի որոշակի լծակներ, հետևաբար նաև՝ ապացույցներ ներկայացնելու առավել լայն հնարավորություններ: Մինչդեռ, անձը, ում նկատմամբ վարույթ է իրականացվում, օժտված չէ վերոգրյալով, հետևաբար՝ անձի՝ վարչական պատասխանատվության հարցը լուծելիս կարևոր նշանակություն ունի անմեղության կանխավարկածի սկզբունքի իրացումը:

Սույն համատեքստում հարկ է նշել, որ վարչական դատավարությունում գործում է դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու («ex officio») սկզբունքը, որը ևս որոշակի առումով ուղղված է վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտների շահերի հավասարակշռմանը: Ինքնին տվյալ սկզբունքի էությունը կայանում է դատաքննության ընթացքում դատարանի ակտիվ ներգրավվածությունն ապահովելու մեջ՝ ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները մեղմելու և հավասարակշռելու անհրաժեշտության հաշվառմամբ: Այնուամենայնիվ, տվյալ սկզբունքի հիմքում ընկած է դատարանի հայեցողությունը, հետևաբար այն վարչաիրավական հարաբերություններում ոչ միշտ է հանդիսանում սուբյեկտների շահերի հավասարակշռման արդյունավետ և լիարժեք երաշխավորման գործիքակազմ:

Հաջորդիվ, անմեղության կանխավարկածի սկզբունքն ուղղված է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը, հետևաբար և՝ հիմնավորված, արդարացի և օրինական որոշման կայացմանը: Ուստի՝ ներկայացվող առաջարկի կենսագործումը կնպաստի պետության՝ ի դեմս պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց նկատմամբ քաղաքացիների վստահության մակարդակի բարձրացմանը: Ավելին՝ գտնում ենք, որ վերջիններիս նկատմամբ հասարակության վստահության մակարդակի վրա բացասաբար ազդող գործոններից մեկն

անձանց որոշ դեպքերում ոչ հիմնավոր կերպով վարչական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան է: Կարծում ենք, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու պարագայում անմեղության կանխավարկածի սկզբունքի գործողությունը կբարձրացնի վարչական վարույթն իրականացնող մարմնի՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների, իսկ դրանց իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու պայմաններում՝ նաև դատարանի համապատասխան որոշումների որակը: Մասնավորապես, վերոգրյալ գործերով անմեղության կանխավարկածի կիրառումը կարող է նպաստել գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ քննությանը և վարչական իրավախախտում կատարած անձանց բացահայտմանը՝ միաժամանակ նպաստելով այդ կապակցությամբ հասարակության, այդ թվում և հատկապես՝ վարույթի մասնավոր մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շրջանում տվյալ գործընթացի իրավաչափության և արդարացիության հանդեպ հավատի բարձրացմանը:

Եզրափակելով՝ հարկ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել վարչական իրավունքում անմեղության կանխավարկածի սկզբունքի ներդրման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ տվյալ ոլորտում անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է կիրառվի միայն վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս:

Բացի այդ, սույն համատեքստում հարկ է նաև նշել, որ վարչական իրավախախտումները քրեական իրավախախտումներից հիմնականում տարբերվում են իրավախախտման բնույթով, որի տարբերակման ցուցիչն առավելապես տվյալ իրավախախտման հանրային վտանգավորության աստիճանն է: Այսինքն՝ վարչական իրավախախտումները քրեական իրավախախտումներից տարբերակող հատկանիշներից է դրանց առավել նվազ հանրային վտանգավորության աստիճան ունենալու հանգամանքը: Որպես օրինակ կարող ենք ներկայացնել հետևյալ իրավիճակը. անձի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն ինքնին վարչական իրավախախտում է և հանգեցնում է վարչական պատասխանատվության (օրինակ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 124-րդ հոդվածը[1], որով սահմանվում է վարչական պատասխանատվություն տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար), այնուամենայնիվ, եթե ճանապարհային

[1] Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, ՀՍՍՀԳՍՏ 1985/23, ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=201371

երթևեկության կանոնների խախտման հետևանքով մարդու առողջությանը վնաս է պատճառվել (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածը[1], որը քրեական պատասխանատվություն է նախատեսում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելու համար), ապա այդ պարագայում ի հայտ է գալիս քրեական իրավախախտման հիման վրա անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Հետևաբար՝ վերոշարադրյալը ևս հիմնավորում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով անմեղության կանխավարկածի կիրառման անհրաժեշտությունը, քանի որ քրեական պատասխանատվությունը վարչական պատասխանատվությունից առավելապես տարբերվում է իրավախախտման բնույթով և հանրային վտանգավորության աստիճանով և նման տարբերակման հիմքում ընկած է օրենսդրի կամքը:

Սույն համատեքստում հարկ է վկայակոչել Սահմանադրական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշումը, որով Սահմանադրական դատարանն արտահայտել է դիրքորոշում առ այն, որ *անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի է ոչ միայն ներպետական օրենսդրությանը համապատասխան որպես քրեական հանցանք որակված արարքների առնչությամբ հարուցված վարույթների նկատմամբ, այլև, պայմանավորված տվյալ արարքի բնույթով և նախատեսված պատասխանատվության տեսակներով ու խստությամբ՝ կարող են կիրառվել նաև վարչական և կարգապահական պատասխանատվության վարույթների նկատմամբ*[2]*:*

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նաև նշել, որ մի շարք պետություններ իրենց ազգային օրենսդրություններում որդեգրել են հենց նման քաղաքականություն: Այսպես, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի[3] 1.5. հոդվածով ամրագրված է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ իր մեջ ներառելով նաև դրա տարրերը: Համաձայն վերոգրյալ հոդվածի 2-րդ մասի՝ «այն անձը, որի նկատմամբ վարվում է վարչական իրավախախտման գործով վարույթը, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենսգրքով նախատեսված կարգով՝ գործը քննած դատավորի, մարմնի, պաշտոնատար անձի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ»: Նույն հոդվածի

[1] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ մտել՝ 2022 թվականի հուլիսի 1-ից, https://www.arlis.am/documentview.aspx?docid=199821

[2] Տե՛ս Սահմանադրական դատարանի 22.09.2009 թ. ՍԴՈ-832 որոշումը:

[3] Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Ռուսաստանի Դաշնության օրենսգիրքը, ընդունվել է Պետական դումայի կողմից՝ 20.12.2001, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/

3-րդ և 4-րդ կետերով սահմանված են անմեղության կանխավարկածի հիմնական տարրերը, դրանք են՝ վարչական պատասխանատվության ենթակա անձը չպետք է ապացուցի իր անմեղությունը (որոշակի բացառություններով) և չփարատված կասկածները լուծվում են հօգուտ վարչական իրավախախտում կատարած անձի: Կարծում ենք, որ անմեղության կանխավարկածի վերաբերյալ համապատասխան դրույթ պետք է սահմանել նաև ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով:

Ղազախստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրքը[1] ևս նախատեսում է անմեղության կանխավարկածի սկզբունքի կիրառությունը տվյալ ոլորտում: Այսպես՝ տվյալ օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանվում է.

«1. Անձը, որի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործ է հարուցվել, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով նախատեսված կարգով և հաստատված չէ գործն իր լիազորությունների շրջանակներում քննած դատավորի, մարմնի (պաշտոնատար անձի)՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարճված վարույթի կարգով քննելու, ինչպես նաև տուգանքը վճարելու անհրաժեշտության մասին կարգադրագրով քննելու դեպքում այն անձը, որի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործ է հարուցվել, համարվում է անմեղ մինչև համապատասխան վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահը:

2. Ոչ ոք պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:

3. Մեղավորության վերաբերյալ ցանկացած կասկած մեկնաբանվում է հօգուտ այն անձի, որի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործ է հարուցվել: Նրա օգտին պետք է լուծվեն նաև այն կասկածները, որոնք ծագում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կիրառման ժամանակ»:

Որոշ երկրների իրավական համակարգերում վարչական իրավախախտումները հանդես են գալիս որպես քրեաիրավական արարքներ և ներառված են քրեական օրենսդրության մեջ: Որպես օրինակ կարող ենք ներկայացնել Բելգիայի Թագավորության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Շվեյցարիայի Համադաշնության, Իտալիայի Հանրապետության, Դանիայի Թագավորության ազգային օրենսդրությունները, որոնցում վարչական իրավախախտումները դասվում են քրեական հանցագործությունների շարքին և ներառված են տվյալ պետությունների քրեական օրենսդրություններում[2]: Այս

[1] Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Ղազախստանի Հանրապետության օրենսգիրքը, ընդունվել է 2014 թվականի հուլիսի 5-ին, https://online.zakon.kz/Document/?doc_id=31577399&pos=5;-106#pos=5;-106

[2] **Закопырин В.Н., Дазмарова Т.Н., Зверев А.Н., Тимохов В.П., Васильева И.В.** Законодательство об административных правонарушениях в России и за рубежом: историко-

առումով ուշագրավ է, որ վերը թվարկված երկրների պարագայում ևս վարչական իրավախախտումների նկատմամբ, չնայած դրանց՝ քրեական հանցագործությունների շարքին դասվելու հանգամանքի, միևնույն է, կիրառելի է անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Արդյունքում, հաշվի առնելով ողջ վերոշարադրյալը՝ եզրահանգում ենք, որ անհրաժեշտ է դուրս գալ անմեղության կանխավարկածի սկզբունքի նեղ մեկնաբանության շրջանակներից՝ դրա կիրառման ոլորտը տարածելով նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարաբերությունների նկատմամբ: Գտնում ենք, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է վերաբերելի իրավական ամրագրում ստանա Հայաստանի Հանրապետության վարչական օրենսդրությամբ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով, ինչպես նաև Վարչական դատավարության օրենսգրքով:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, ՀՍՍՀԳՍ 1985/23, ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=201371
3. ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ մտել՝ 2022 թվականի հուլիսի 1-ից, https://www.arlis.am/documentview.aspx?docid=199821
4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսգիրք, ընդունվել է Պետական դումայի կողմից՝ 20.12.2001, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Ղազախստանի Հանրապետության օրենսգիրք, ընդունվել է 2014 թվականի հուլիսի 5-ին, https://online.zakon.kz/Document/?doc_id=31577399&pos=5;-106#pos=5;-106
6. Սահմանադրական դատարանի 22.09.2009 թ. ՍԴՈ-832 որոշումը:

правовой генезис // Национальный интерес, национальная идентичность и национальная безопасность / Под ред. И. Савченко. Том 102. Европейские труды по социальным и поведенческим наукам. Европейское издательство, 2021 г. էջեր 1186–1194:

7. **Бахрах Д.Н., Ренов Э.Н.** Производство по делам об административных правонарушениях: Пособие для слушателей нар. ун-тов. - М.: Знание, 1989.

8. **Деменкова Н.Г., Игнатова М.С., Стариков И.Ю.** Административное право в схемах и таблицах: Учеб. пособие. – М.: Проспект, 2019.

9. **Закопырин В.Н., Дазмарова Т.Н., Зверев А.Н., Тимохов В.П., Васильева И.В.** Законодательство об административных правонарушениях в России и за рубежом: историко-правовой генезис // Национальный интерес, национальная идентичность и национальная безопасность / Под ред. И. Савченко. Том 102. Европейские труды по социальным и поведенческим наукам. Европейское издательство, 2021.

10. **Мигачев Ю.И., Попов Л.Л., Тихомиров С.В.** Административное право Российской Федерации: Учебник для вузов / Под ред. Л.Л. Попова. 6-е изд., перераб. и доп. - М.: Издательство Юрайт, 2024.

11. **Монтескье Ш.Л.** О духе законов / Пер. с фр. А. Горнфельда. - М.: Издательство АСТ, 2022.

12. **Россинский Б.В., Старилов Ю.Н.** Административное право: Учебник. 4-е изд., пересмотр. и доп. - М.: Норма, 2009.

13. **Цоколова О.И.** К вопросу о презумпции доверия полиции // Научный портал МВД России. 2019. № 1 (45).

14. **Цуканов Н.Н.** Правовые презумпции в административной деятельности милиции: дис. ... канд. юрид. наук. - Омск, 2001.

15. **Шергин А.П.** Процессуальная составляющая правового регулирования административной ответственности // Административное право и процесс. 2010. № 3.

НЕОБХОДИМОСТЬ ВНЕДРЕНИЯ ПРИНЦИПА ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ В АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВЫЕ ОТНОШЕНИЯ

Аннотация

Принцип презумпции невиновности является всеобщим правовым принципом, который закреплен в статье 66 Конституции Республики Армения. В связи с вышеуказанным принципом еще в XVIII веке известный французский философ Ш. Монтескье писал: "Если невиновность граждан не огорожена, то и свобода не огорожена". Большинство авторов в научной литературе рассматривают принцип

презумпции невиновности исключительно как принцип уголовного судопроизводства. Не разделяя вышеизложенного мнения, в рамках статьи считаем обязательным обсудить необходимость введения и четкого законодательного закрепления принципа презумпции невиновности в административно-правовые отношения. Поэтому в рамках настоящей статьи мы попытались выделить факторы, обосновывающие необходимость введения и четкого законодательного закрепления принципа презумпции невиновности в административно-правовые отношения, а также более четко подчеркнуть сферу применения данного принципа в рассматриваемых правоотношениях, учитывая многообразие административно-правовых отношений.

Ключевые слова: презумпция невиновности, административная ответственность, административное правонарушение, дело об административных правонарушениях, применение презумпции невиновности в административно-правовых отношениях.

THE NEED TO INTRODUCE THE PRINCIPLE OF THE PRESUMPTION OF INNOCENCE IN ADMINISTRATIVE-LEGAL RELATIONS

Annotation

The principle of the presumption of innocence is a universal legal principle, which was enshrined in Article 66 of the Constitution of the Republic of Armenia. In connection with the above-mentioned principle, back in the 18th century, the famous French philosopher S. Montesquieu wrote: “If the innocence of citizens is not fenced, then freedom is not fenced either”. In scientific literature, the majority of authors consider the principle of the presumption of innocence exclusively as a principle of criminal procedure. Not sharing the above opinion, within the framework of this article, we consider it necessary to discuss the need for the introduction and clear legal establishment of the principle of the presumption of innocence in administrative-legal relations. Therefore, within the framework of this article we have tried to highlight the factors justifying the need for the introduction and clear legislative establishment of the principle of the presumption of innocence in administrative-legal relations and to more clearly emphasize the

scope of application of this principle in the legal relations in question, taking into account the diversity of administrative-legal relations.

Keywords: presumption of innocence, administrative responsibility, administrative offense, case on administrative offenses, application of the presumption of innocence in administrative-legal relations.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.03.2025 թ., գրվել է գրախոսության 13.03.2025 թ., ընդունվել է տպագրության 23.03.2025 թ.: